



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 114

Ձեռնարկող՝

<<Մերձմուկովյան>> ԲԲԸ

Ք. Գյումրի, Խորենացու 45

Գործունեությունը՝

Այգաբացի անդեզիլիքաբազալիքների երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպագակով 2018-2020թթ.
Կարարվելիք երկրաբանական ուսումնասիրության
աշխարհանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Շիրակի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈՒՅԻ
տնօրենի Ժ/Մ՝

Ռ. Ոսկանյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԵՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 114

28 , 12 2018 p.

Այգաբացի անդեզիվաբազմությունների երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով 2018-2020թթ. կարարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Հեռարկող՝

«Մերծմուկովյան» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ և կից
կիստաթղթեր /Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

Շիրակի մարզ, Այգաբաց համայնք

Ընկերությունը Շիրակի մարզի Այգաբացի անդեզիտների երևակման 11հա տարածքում նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվելու են հորատանցքերի և լեռնային փորվածքների անցմամբ, նմուշարկման գուգորդությամբ:

Այգաբացի անդեզիտարազալտների հանքավայրը գտնվում է Շիրակի մարզի Այգաբաց գյուղից 2-2,5կմ դեպի հյուսիս-արևմուտք, Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի վարչական տարածքում: Հանքավայրի մոտակա բնակավայրերն են Այգաբաց, Բենիամին, Արևիկ, Ազատան գյուղերը:

Աշխատանքների նպատակն է պարզել օգտակար հանածոյի պիտանելիությունը ըստ <ԱՍ ԱՆՕ 8267-95 <<Եսիճ և կոպիճ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար>> և <<Ավագ շինարարական աշխատանքների համար>> <ԱՍ ԱՆՕ 8736-95-ի պահանջների՝ պահի և խճի արտադրության համար:

Ուսումնահրվող տարածքներում անդեզիտաբազալտները գնահատելու համար անհրաժեշտ է կատարել 1:2000 մասշտարի երկրաբանահանույթային աշխատանքներ: Երկրաբանական քարտեզ կազմելու համար նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական հանույթ 11.0հա տարածքի վրա, բոլոր փորվածքների, նմուշարկման տեղենի առարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձև հորատանքքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարգ համաձայնածրան



թագիկներով՝ 112-93 մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել մինչև 47.0 մետր խորությամբ: Հորատման աշխատանքները կիրականացվեն մասնագիտացված մասնավոր կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Ապահովվելու է նվազագույնը 90 % հորատահանուկի ելք:

Նախատեսվում է հորատել 8 հորատանցք, որի համար կկատարվի հորատող հաստոցի 8 տեղակայում և տեղահանում. 1-ին տեղամասում հորատվելու է 2 հորատանցք 19 և 19.3մ խորություններով, 2-րդ տեղամասում՝ 6 հորատանցք 47.0, 15.0, 18.0, 29.0, 39.8^մ և 25.6 մետր խորություններով: Հորատման ընդհանուր ծավալը կկազմի 212,7մ²: Համապատասխանաբար նախատեսվում է նախապատրաստել 8 հորատման հարթակ 384 մ² ընդհանուր մակերեսով և 76,8 մ³ ծավալով:

Հարթակը տեղադրվելու է ապագա հորատանցքի տեղանշման տեղում, չափերը պետք է բավականացնեն հորատող հաստոցի տեղադրման համար:

Նախատեսվում է իրականացնել հորատանցքերի կապակցում, հորատահանուկի փաստագրում և նկարագրում: Կատարվելու է նմուշների վերցնում, դրանց պիտակավորում և փաթեթավորում նմուշարկման միջակայքերի նշմամբ: Տեղամասի տոպոհիմքի վրա կնշվեն հորատանցքերի տեղերը, որոնք կգրանցվեն համապատասխան մատյանում:

Օգտակար հանածոյի ֆիզիկա մեխանիկական, քիմիական և պետրոգրաֆիական հատկությունների ուսումնասիրման նպատակով բոլոր հորատանցքերը կենթարկվեն հանուկային մենակտորային նմուշարկման:

Նախատեսվում է 23 նմուշների ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրություն, 4-ական նմուշների քիմիական և պետրոգրաֆիական ուսումնասիրություն:

Ուսումնասիրությունները կկատարվեն համապատասխան մասնագիտացված լաբորատորիայում:

Լեռնային զանգվածից բլոկների և շինաքարի ելքի որոշման համար նախատեսվում է 1 փորձնական բացահանքի անցում՝ 280m^3 ծավալով, որից 80 m^3 դեյլուպիալ առաջացումներից ու հողմնահարված անդեզիտաքայլներից և 200m^3 չհողմնահարված՝ թարմ ապարներից:

Ինժեներակրաքանական և իիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական աշխատանքների ընթացքում:

Անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ուղիղմետրական չափումների, ճառագալթահիգիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար:

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները՝ նախատեսվում է դուռը նորոգում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Համաձայն նախնական գնահատման հայտի տարածքները վարելահողեր են, ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրում գրանցված տեսաներ են հայտնաբերվել:



Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Հողի վերին շերտի պահպանման նպատակով նախատեսվում է հորատահարթակների /8 հորատահարթակ/ կառուցման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո հետ փոել և վերականգնել լանդշաֆտը: Յուրաքանչյուր հորատահարթակի մակերեսը կկազմի 48քմ և հաշվի առնելով հողաբուսաշերտի 0,2մ հզրությունը խախտվող հողի ծավալը կազմում է 76,8մ3:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները:

- Նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված, հապատասխան մեկուսացում ունեցող տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ):
- Կենցաղային աղբի տեղափոխման մոտակա աղբահավաք կետեր:
- Մեքենաների վրա արտանետվող վնասակար նյութերի չեղոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Կեղտաջրերի հավաքում հորատիա զուգարանում, որը դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով:
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:
- Աշխատանքների կատարման տեղամասերի ցանկապատում, մեկուսացում՝ անվտանգության նկատառումներից ելնելով:
- Մեքենաների և տեխնիկայի սպասարկումն իրականացվելու է հատուկ դրա համար նախատեսված վայրում:
- Հետախուզական փորվածքների անցում չոր եղանակին:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Մերձմուկովյան» ԲԲ ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, հետախուզական փորվածքների անցման շրջանում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ:
 2. Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես չեղոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:
 3. Հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով:
- Զրային ավագանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հորատման հրապարակների ռեկուլտիվացիա և լանդշաֆտի վերականգնում՝



շինարարության ժամանակ հանված և կուտակված հողաբուսաշերտով: Ուեկուլտիվացիոն աշխատանքները իրականացվելու են ձեռքով, որի գումարը հաշվարկված է 46080հազ դրամ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ թափոնների օբյեկտի ստեղծում չի նախատեսվում: Իսկ կենցաղային աղբը կտեղափոխվեն մոտակա աղբահավաք վայր:

Եզրահանգում. Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացմանը նթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը։ Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպահականության նախարարության ստորաբաժանումները։

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
 2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
 3. Ուսումնասիրության ընթացքում առաջացած աղբի հեռացումն անհրաժեշտ է իրականացնել <<օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«<Մերձմուսկովյան>» ԲԲԸ կողմից ներկայացված Շիրակի մարզի Այգաբացի անդեզիտաբազալտների երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով՝ 2018-2020թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տարբերակ 11

Ա. Դրանչյան

| Guwahati

6 | Page